«Հաստատում եմ»
Հայաստանի շախմատային ֆեդերացիայի
նախագահի առաջին տեղակալ՝ Ս.Լպուտյան
«06» « մարտի » 2023թ.

Հայաստանի աղջիկների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի աղջիկների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարը կանցկացվի Հայաստանի շախմատի ակադեմիայում (հասցե՝ Շևչենկո 34, ք. Երևան, ՀՀ) ս/թ. մարտի 23-ից ապրիլի 02-ը:

Մրցաշարն անցկացվում է հետևյալ տարիքային խմբերով.

ա) մինչև 10 տարեկան (2012 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) աղջիկներ

բ) մինչև 12 տարեկան (2010 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) աղջիկներ

գ) մինչև 14 տարեկան (2008 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) աղջիկներ

դ) մինչև 16 տարեկան (2006 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) աղջիկներ

Մրցաշարն անցկացվում է ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների համաձայն, շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով: դ (մինչև 16 տարեկան աղջիկներ) մրցաշարը, մասնակիցների քիչ քանակի դեպքում, հնարավոր է անցկացնել նաև նաև շվեյցարական 7 խաղափուլով կամ շրջանային մրցակարգով:

Հավասար միավորներ վաստակելու դեպքում բոլոր մրցաշարերում տեղերը կորոշվեն ըստ.

1. հատված Բուխհոլց - 1 ցուցանիշի
2. գումարային Բուխհոլցի ցուցանիշի
3. սև գույնով խաղացած պարտիաների առավելագույն քանակի
4. հաղթանակների առավելագույն քանակի

Ժամակարգը՝ յուրաքանչյուր մասնակցի տրվում է 90-ական րոպե առաջին 40 քայլի համար, այնուհետև 30 րոպե մինչև պարտիայի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

<u>Հայաստանի առաջնության ուղեգրեր:</u> Հայաստանի աղջիկների առաջնության եզրափակիչ փուլին մասնակցելու իրավունք կնվաճեն այն շախմատիստուհիները, ովքեր իրենց տարիքային խմբերում կգրավեն հետևյալ տեղերը.

	Մինչև 10	**Մինչև 12**	**Մինչև 14**	**Մինչև 16**
Աղջիկներ	12	10	6	6

Բացման արարողություն	25 մարտի, 11:30
1-ին խաղափուլ	25 մարտի, 12:00
2-րդ խաղափուլ	26 մարտի, 11:00
3-րդ խաղափուլ	27 մարտի, 11:00
4-րդ խաղափուլ	28 մարտի, 11:00
5-րդ խաղափուլ	29 մարտի, 11:00
6-րդ խաղափուլ	30 մարտի, 11:00
7-րդ խաղափուլ	31 մարտի, 11:00
8-րդ խաղափուլ	01 ապրիլի, 11:00
9-րդ խաղափուլ	02 ապրիլի, 11:00
Փակման արարողություն	02 ապրիլի, 17:00

- Խաղասկզբից ուշացման թույլատրելի ժամանակը սահմանվում է 30 րոպե:
- Խաղասրահ չի թույլատրվում ներկայանալ բջջային հեռախոսներով և սմարթ ժամացույցներով, հակառակ դեպքում խաղացողին կգրանցվի պարտություն:
- Մրցաշարի ընթացքում մարզերը ներկայացնող մասնակիցների և նրանց մարզիչների ծախսերը (ճանապարհածախս, հյուրանոց, օրապահիկ) հոգում է գործուղող կազմակերպությունը:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է մարտի 15-ը: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 043 44 84 73 հեռախոսահամարով:

Մրցաշարի գլխավոր մրցավար՝
ՄՄ Անուշավան Առաքելյան